ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ՍՑ-ԼՕ-2019/12 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի՝ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին ՍՑ-ԱՄ-2019/61 ընթացակարգով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մինչև ԵԴ/9218/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը Բողոքներ քննող անձանց որևէ գործողություն կատարելն արգելելու վերաբերյալ 10.04.2019թ. կայացված որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով, որ 18.03.2019թ. թիվ ՍՑ-ԱՄ-2019/61 ընթացակարգը 18.04.2019թ. մակագրվել է ինձ և տրվել նոր թիվ ՍՑ-ԼՕ-2019/12 ծածկագիրը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կասեցնել ՍՑ-ԼՕ-2019/12 (ՍՑ-ԱՄ-2019/61) ծածկագրով ընթացակարգի քննությունը՝ մինչև ԵԴ/9218/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **Լ. ՕՀԱՆՅԱՆ**